

ՄԵՐ
ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Լիբանանի Անկախութեան Տօնին առիթով եւ մամլոյ սենտիքայի որոշումին համաձայն, «ԱԶԳԱԿ» լոյս պիտի չտեսնէ վաղը՝ Հինգշաբթի, 22 Նոյեմբեր 2001ին: Մեր յաջորդ թիւը՝ Ուրբաթ, 23 Նոյեմբեր 2001:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝
ՏՈՔԹ. ՄԵԼՔՈՆ
ԷՊԼԻՂԱԹԵԱՆԻ ՅԵՏ

Այսօր մեր Տրդ Էջով կու տանք, Լիբանանի Անկախութեան Տօնին առիթով, մեր հարցալրոյցը՝ Լիբանանեան խորհրդարանի երկարամեայ անդամ տոքթ. Մելքոն Էպլիդարեանի հետ:

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՏՕՆԸ

Վաղը 58րդ տարեդարձն է քաղաքակրթութիւններու, կրօններու եւ ընկերային ու ազգային առանձնախտութիւններու համակեցութեան եւ գործակցութեան օրրանին՝ լիբանանեան հայրենիքին անկախութեան հռչակումին: 1943ին հաստատուեցան Լիբանանի քաղաքական եւ ազգային ուրոյն դէմքը եւ ուրոյն շահերը, երկիրն ու բնակչութիւնը սկիզբը դրին մարդկային եւ ընկերային լինելութեան գործընթացի մը, որ եղաւ համամարդկային օրինակ իր մարդկայնական արժէքներով եւ իր քաղաքակրթական սլացքով:

Բնականաբար Լիբանանի մէջ նաեւ իրար խաչաձեւեցին, մրցակցեցան եւ երբեմն նաեւ քախեցան կրօնական ու համայնքային նախասիրութիւններ եւ նախապաշարումներ, տնտեսական կամ քաղաքական տեղական հատուածներ, ինչպէս նաեւ օտար շահեր եւ միջամտութիւններ: Բայց, այս հակամարտութիւններուն կողքին, եւ անոնց լուծումին ճամբով Լիբանանի մէջ նաեւ արտայայտուեցան արժէքներ, որոնք ժողովուրդը դուրս բերին մրցակցութեան եւ կղիւի բիրտ ասպարէզէն եւ տեղադրեցին մարդկութեան պատմութիւնը լուսաւորող օրինակներու շարքին: Հատուցները եւ գաղափարաբանութիւնները իրարու հետ եղան հանդուրժողական յարաբերութեան մէջ իսկ համայնքային եւ հատուածական շահերը համադրուեցան համեմատական իրաւունքներու համակարգի մը մէջ. բարոյական եւ քաղաքական ուրոյն սկզբունքները Լիբանանը վերածեցին արեւելքի եւ արեւմուտքի միջեւ քաղաքակրթութեան կամուրջի, արաբական աշխարհը առաջնորդող լուսամտի ղեկավարութեան, արաբական դատի անխոնջ պաշտպանի, ինչպէս նաեւ ընկերային ներքին համերաշխութեան եւ ընկերային արդարութեան իրագործումի ենթահողի:

Իր պատմութեան ընթացքին Լիբանանը դէմ յանդիման եկաւ ծանրագոյն փորձութիւններու, որոնք պիտի կործանէին որեւէ այլ ընկերութիւն՝ քաղաքացիական երկարատեւ պատերազմ, հարաւային Լիբանանի բռնագրաւում եւ տնտեսական ահաւոր տագնապ: Լիբանան շատ սուղ գին վճարեց յատկապէս պատերազմի արհաւիրքին, որ խախտեց համայնքային նուրբ հաւասարակշռութիւնը, գրեթէ հիմնայնապէս քանդեց տնտեսութիւնը, թափ տուաւ Կանգուածային արտագաղթի եւ վերադասաւորեց ծանայններու եւ քաղաքական ուժերու դիրքերն ու դերերը, 1989ի Թաէֆի համաձայնագիրով:

Լիբանանը պատերազմէն դուրս եկաւ հիւժուած բայց նաեւ աւելի յստակատես եւ աւելի գիտակից: Սուրիոյ գործօն մասնակցութեամբ կարելի եղաւ վերականգնումը իշխանութեան վարկին եւ կառոյցներուն, ինչպէս նաեւ հակակշռումը Կիւնէյ տարբեր խմբաւորումներու տարածած անիշխանութեան: Շնորհիւ լիբանանեան բանակին վերամիաւորումին եւ ամրապնդումին վերահաստատուեցաւ անկախութեան դրօշը եւ վերաթելուրդեցան պետութիւնն ու պետական քաղաքականութիւնը:

Լիբանանի քաղաքացիական պատերազմը յանգեցաւ Լիբանանի եւ Սուրիոյ միջեւ ռազմավարական գործակցութեան եւ յատկապէս լիբանանեան բանակի վերականգնումին. հետեւաբար, հետպիտեւ հրատապ բնոյթ ստացաւ Իսրայէլի կողմէ բռնագրաւում Լիբանանի հարաւային եւ արեւմտեան Պէքաւայի հողերուն ապստաղութիւնը. թափ առաւ ու ծաւալեցաւ հարաւի ապստաղութեան պայքարը, որուն իբրեւ արդիւնք 25 Մայիս 2000ին Իսրայէլ իր ուժերը դուրս բերաւ լիբանանեան հողերէն: Այս փառաւոր յաղթանակը իրականացաւ շնորհիւ լիբանանցիներու գիտակից կեցուածքին, հարաւի ժողովուրդին եւ ապստաղական կապակերպութիւններու անդուլ դիմադրութեան եւ լիբանանեան բանակին աներեր Կօրակցութեան:

Միւս կողմէ, պատերազմը եւ պատերազմական վիճակները պատճառ եղան տնտեսական սուր տագնապի, որ կը շարունակէ յամենայն ու ծանրօրէն ճնշել քաղաքացիներուն եւ յատկապէս երիտասարդութեան եւ ուսանողութեան վրայ հակառակ յաջորդական կառավարութիւններու եւ ձեռնարկեց գործարարներու ձիգերուն: Այսօր, քաղաքական թէ՛ տնտեսական ուժերը սկսած են անդրադառնալ, թէ տնտեսական լճացումէն դուրս գալու ճամբան կ'անցնի համայնքները:

Շար.ը՝ էջ 3

Միջին ԱՐԵՒԵԼԻԻ ԳԾՈՎ
ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՈՐ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲՈՆԱՐԱՐՔՆԵՐԸ
ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՆ



Ռաֆաէլ մէջ Իսրայէլեացի ուժերը կը քանդեն բնակավայր մը:

Ամերիկեան նախաձեռնութեան յայտարարութեան մէջ օր ետք, Իսրայէլ երէկ պաղեստինցիներու բնակարաններ քանդեց Կազայի մէջ եւ հրէական բնակեցման նոր վայրերու ծրագիրներ յայտարարեց:	Ներքին գործերը կը քանդեն բնակավայր մը:	Իսրայէլեան բանակը յայտնեց, որ երկու անբնակ տուններ քանդած է: Բանակը հերքեց, որ մտած է չորան մը, ուր պաղեստինեան իշխանութեան ամբողջական հակազդի ենթակայ է:
Գեցին անպատասխար ձգելով անոր բնակիչները:	Իսրայէլեան բանակը արդէն քանդած է Կազայի մէջ քանդեց, որ մտած է չորան մը, ուր պաղեստինեան իշխանութեան ամբողջական հակազդի ենթակայ է:	Իսրայէլեան բանակը արդէն քանդած է Կազայի մէջ քանդեց, որ մտած է չորան մը, ուր պաղեստինեան իշխանութեան ամբողջական հակազդի ենթակայ է:

ԱՆՁՆԱՏՈՒՐ ԸԼԱԼՈՒ ԸՍՍԱԶԱՅՆՈՒԹԵԱՆ ՄԸ ՄԱՍԻՆ

ԹԱԼԵՊԱՆ ՀԱԶԱՐԱՒՈՐ ԶԻՆԵԱԼ ՆԵՐ ԿԸ ՓՈՐՁԵՆ
ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼ

Քուստուզի մէջ պաշարուած թալեպաններու հազարաւոր զինեալներ երէկ կը փորձէին բանակցութիւններ կատարել անձնատուր ըլլալու համաձայնութեան մը մասին, մինչ ամերիկեան ռազմաօդային ուժերը կը շարունակէին ռազմական զինամթերքի իսլամական շարժումին միջնաբերդը նկատուող Գանտահարը:

Փաքիստան - Աֆղանիստան հարաւարեւմտեան սահմաններին հասնող տեղեկութիւններուն համաձայն՝ թալեպանները տակաւին իրենց զօրաւոր հակակրօնիկ տակ կը պահեն

Գանտահարը, հակառակ անընդհատ տեղացող ռուսներուն:

Քուստուզի մէջ եւս կը շարունակեն կռիւը աւելի քան տասը հազար զինեալներ, որոնց կարգին փաքիստանցիներ, արաբներ եւ չեչէներ: Շրջանէն հասած լուրերը կ'ըսեն, որ թալեպանները պատրաստ են վար առնելու գէնքերը եւ ՄԱԿի անձնատուր ըլլալու, սակայն անոնք որեւէ պարագայի տակ քաղաքը պիտի չյանձնեն Հիւսիս-Դաշիքի ուժերուն, որոնք կրնան ջարդ մը կազմակերպել Քուստուզի մէջ: Մօտակայ Թալեքան քաղաքին մէջ Հիւսիս-Դաշիքի հրամանատարները հրաժարուին զինուորական ծառայէն: Մոհամմէտ Տաուաթի հաստատեց, որ թալեպաններու ներկայացուցիչներուն հետ ուղղակի բանակցութիւններ կատարելու գծով աշխատանք կը տարուի: Տաուաթի աւելցուց, որ թալեպանները զինեալներ արդէն սկսած են Հիւսիս-Դաշիքի ուժերուն կողմէ անցնել:

Ընդդիմադիր աղբիւրներ հաղորդեցին նաեւ, որ թալեպաններու կողմէ արդէն սկսած են Հիւսիս-Դաշիքի ուժերուն կողմէ անցնել:

Ընդդիմադիր աղբիւրներ հաղորդեցին նաեւ, որ թալեպաններու կողմէ արդէն սկսած են Հիւսիս-Դաշիքի ուժերուն կողմէ անցնել:

ՆԱԽԱԳԱՅՔՈՉԱՐԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ
ԵՈՒՆԵՍՔՕԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՕՐԵՆԸ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան երէկ ընդունեց ԵՈՒՆԵՍԲՕԻ ընդհանուր տնօրէն Կոլիչիւր Մացուրայի ղեկավարած պատուիրակութիւնը, որ Հայաստան կը գտնուի մասնակցելու համար «Վերածնունդ Մշակոյթի Միջոցով» ծրագրի նուիրատուներու համաժողովին, որուն նպատակն է քննարկել եւ ելեւմտական միջոցներ գտնել Հայաստանի մշակութային արժէքներու պահպանման համար:

Երախտագիտութիւն յայտնելով նախաձեռնութեան համար, նախագահ Քոչարեան ԵՈՒՆԵՍԲՕԻ տնօրէնի յայտնած է, որ հայ ժողովուրդը առանձնապատուկ վերաբերմունք ունի մշակոյթի, կրթութեան եւ գիտութեան նկատմամբ:

Կոլիչիւր Մացուրայ ցանկութիւն յայտնած է աւելի արդիւնաւէտ դարձնել Հայաստանի եւ ԵՈՒՆԵՍԲՕԻ միջեւ յարաբերութիւնները: Ան յատկապէս անդրադարձած է տեղեկատուութեան փոխանակման անհրաժեշտութեան:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑՈՎ
ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՄԷՋ ՄԻԱՑԵԱԼ
ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԴԵՍՊԱՆԸ
ԼԱԻԱՏԵՍ

Ազրպէյճանական «Կապէթ 525» թերթը հաղորդեց, որ Ազրպէյճանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ռոս Ուիլսոն հարցալրոյցի մը ընթացքին յայտնած է, թէ Միացեալ Նահանգներու եւ Ռուսիոյ միջեւ համագործակցութիւնը Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան լուծման համար նպաստաւոր պայմաններ կը ստեղծէ: «Յատկապէս Սեպտեմբեր 11էն ետք Ռուսիա եւ Միացեալ Նահանգներ այդ հարցին լուծումը նոյն ուղղութեան մէջ կը տեսնեն», ըսած է Ուիլսոն:

Խօսելով Քուստուզի թիւ 907 Յօդուածի առկայութեան մասին, Ուիլսոն յայտնած է, թէ Միացեալ Նահանգներու կողմէ Ազրպէյճանին տրուելիք օժանդակութիւնը առաջին հերթին պիտի ծառայէ Ազրպէյճանի սահմաններու պահպանման, եւ պիտի պարունակէ արհեստագիտական, տնտեսական եւ քաղաքական օգնութիւն պանապան դորտնէրէներ:

Ռոս Ուիլսոն ԵԱՀԿի Մինսքի խմբակի համանախագահներու շրջան այցելութիւնը դրական գնահատած է: Ըստ դեսպանին՝ այցելութիւնը այնքան արդիւնաւէտ էր, որ պայման կարելի է նկատել հիմք՝ յառաջիկայ բանակցութիւններուն համար:

ԸՆԿԱՆԱԲՈՐՈՒԹԵԱՄԲ՝

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ
Ն. Վ. ՉՕՐ. ԷՄԻԼ ԼԱՀՈՒՏԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝

Հ.Յ.Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ
ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

ԽՕՍԵ՝ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ՆԵՊԻՀ ՊԵՐԻԻ
ՎԱՐՉԱՊԵՏ ՌԱՖԻՔ ՀԱՐԻՐԻԻ
ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ
Հ.Յ.Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

Տեղի կ'ունենայ այսօր՝ Չորեքշաբթի, 21 Նոյեմբեր 2001, երեկոյեան ժամը 8:00ին, ԵՈՒՆԵՍԲՕԻ սրահին մէջ:

Շար.ը՝ էջ 10

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲՈՆԱՐԱՐՔՆԵՐԸ...

Շարունակուած Ա. ԷջԷԸ

պուլտոգըրները եւ հրա- սայլերը Ռաֆաէի շրջա- նը ներխուժեցին, որով- հետեւ պաղեստինցի զին- եայններ անընդհատ կրակ կը բանային իսրայէլացի զինուորներուն դէմ, որոնք շրջանին մօտ կը գտնուէին:

Քանդուած բնակա- րաններէն մէկուն տէրը ըսաւ, որ իսրայէլեան ու- ժեք անակնկալօրէն ներ- խուժեցին Ռաֆաէ եւ ժա- մանակ իսկ չտուին, որ բնակարանը պարպէ: Ան աւելցուց, որ եթէ աշ- խարհը ահաբեկչութեան սահմանում կը փնտռէ, իսրայէլ թող գայ, որով- հետեւ վարչապետ Արիէլ Շարոն մարմնացումն է ահաբեկչութեան:

Միւս կողմէ, պաշտ- պանութեան նախարար Պենիամին Պըն էլիզաբեթի բանբերը ըսաւ, որ Հեպ- րոնի մէջ իսրայէլ չար- ժական բնակարաննե- րուն փոխարէն աւելի հաստատ քարայէն բնա- կարաններ պիտի կառու- ցէ: Ան աւելցուց, որ շար- ժական տունները անապա- հով դարձած են հրեանե- րուն համար: Բանբերը չեշտեց, որ քարայէն բնակարաններու կառու- ցումը քաղաքական դրդապատճառներ չունի եւ թէ ծրագիրին նպա- տակն է աւելի ապահով դարձնել Հեպրոնի հրեա- կան թաղամասը: Բանբե- րը չըսաւ սակայն, թէ քա- նի բնակարաններ նորե- րով պիտի փոխարինուին: Պաղեստինցիներ դա- տապարտեցին իսրայէլի կառավարութեան բնա- կեցման նոր ծրագիրը:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՆՈՐ ՆԱԽԱՅԵՆՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգնե- րու արտաքին գործոց նախարար Քոլին Փաութը Երկուշաբթի գիշեր ար- տասանեց սպասուած խօսքը, որուն մէջ կարե-

ւոր բաժին վերապահ- ւած էր Միջին Արեւելքի տագնապին:

Իր խօսքին մէջ, Փաութը յայտարարեց դիւանագիտական առա- քելութիւն մը, սակայն որեւէ առաջարկ չներկա- յացուց պաղեստինցիներ- րուն տագնապը լուծելու համար: Փաութը ըսաւ, որ ամերիկացի երկու միջ- նորդներ Միջին Արեւելք պիտի ուղարկուին տես- նելու համար, թէ ինչ քայ- լեր պէտք է առնել գոր- ծադրութեան դնելու հա- մար Ապրիլին գոյացած զինադուլի համաձայնու- թիւնը: Փաութը խօսքին մէջ վերահաստատեց եր- կու պետութիւններ ունե- նալու ամերիկեան կեց- ւածքը: Ան պահանջեց նաեւ, որ պաղեստինցի- ներն ու իսրայէլացիք վերջ տան 13ամեայ վայ- րագրութեան ալիքին ու բռնարարքներուն:

Փաութը դիտել տուաւ նաեւ, որ Միացեալ Նա- հանգներ պատրաստ են իսրայէլացիներն ու պա-ղեստինցիները առաջնոր- ձելու եւ ժամադակելու անոնց, որպէսզի մնա- յուն խաղաղութեան մը հասնին: Ան աւելցուց, որ նախագահ Ճորժ Պուշ- արտաքին գործոց օգնա- կան նախարար Ուիլիւմ Պըրնզէն եւ ծովուծի նախկին հրամանատար Անթոնի Չիլիէն խնդրած է շարաթափելին Միջին Արեւելք վերադառնալ խորհրդակցութիւններ ունենալու համար իսրա- յէլացի ու պաղեստինցի պաշտօնատարներու հետ:

Իսրայէլի արտաքին գործոց նախարար Շիմոն Փերէս ողջունեց Փաութը- լի յայտարարութիւնը, դիտել տալով, որ անիկա դրական է: Վարչապետ Արիէլ Շարոն սակայն վերստին չեշտեց, որ բա- նակցութիւններու կերպով կարե-

ւոր բաժին վերապահ- ւած էր Միջին Արեւելքի տագնապին:

Պաղեստինեան իշխա- նութեան նախագահ Եա- սէր Արաֆատ ողջունեց Փաութըի յայտարարու- թիւնը ամերիկացի նա- խարարին հետ հեռաձայ- նային հաղորդակցու- թեան մը ընթացքին:

Միւս կողմէ, արաբա- կան աշխարհն ու Եւրո- պան թէեւ ողջունեցին սակայն խանդավառու- թիւն չցուցաբերեցին Փաութըի յայտարարած ծրագրին հանգէպ: Անոնք դիտել տուին, որ Ուաշինկթըն կը տատամ- սի ու կը զգուշանայ իս- րայէլի վրայ ճնշում բա- նեցնել, որպէսզի այս վերջինս խաղաղութիւն հաստատէ պաղեստինցի- ներու հետ:

Եգիպտոսի արտաքին գործոց նախարար Ահ- մէտ Մահէր դրուատեց Փաութը պաղեստինե- իսրայէլեան տագնապին բոլոր դժուարութիւննե- րուն ակնարկելու համար հակառակ անոր, որ ան «լուծումներ չառաջար- կեց»:

Մոցի մամուլը աւելի քննադատական կեց- ւածք որդեգրեց, յայտ- նելով, որ Փաութը կը կրկնէ ամերիկեան նախ- կին սխալները բոլոր պա- հանջներն ու ճնշումները բեռնելով պաղեստին- ցիներուն վրայ եւ ոչինչ պահանջելով իսրայէլէն:

Եւրոպացի բարձրաս- տիճան պաշտօնատար- ներ եւս դրական նկատե- ցին Փաութըի ճառը, մաղ- թելով, որ անիկա գործ- նական քայլերով պիտի թարգմանուի:

● ՊԱՂԵՏԻՆԻ Ազա- տագրութեան ժողովըր- դային ձակատը պաղես- տինեան իշխանութեան պահանջեց ազատ արձա- կել քանտարկուած ծայ- րայեղականները: Շար- ժումին հիմնադիրը

ժողով Հապաշ ըսաւ, որ ձերբակալութիւնները կ'սկանահարեն իսրայէ- լի դէմ պայքարը:

● «ԷՄՆԸՍԹԻ Ին- թըրնէշնէլ» իսրա- յէլը կ'ամբաստանէ պա-ղեստինցիները չարչարե- լու ու խոչտանգելու յան- ցանքով: Կազմակերպու- թեան կողմէ հրապարակ- ւած տեղեկագիրը կը նշէ, որ իսրայէլեան ու- ժեքը բիրտ միջոցներ կ'որ- դեգրեն ձերբակալուած պաղեստինցիներու հան- դէպ եւ թէ իսրայէլ հե- տաքննութիւն չի բանար ստուգելու համար խախ- տումները: «ԷմՆԸՍԹԻ» կողմէ ուղղեց ՄԱԿի, որ հե- տապնդէ այս հարցը:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԹԱԼԵՊԱՆ ՀԱԶԱՐԱՒՈՐ...

Շարունակուած Ա. ԷջԷԸ

ապաստանած վայրին մասին տեղեկութիւններ ունե- ցողները:

Միւս կողմէ, երէկ գտնուեցան դիակները չորս թղթա- կիցներուն, որոնք կորսուած յայտարարուած էին Եւ- կուշաբթի օր: Աւտոբուսի, իտալացի, սպանացի եւ աֆղան թղթակիցներուն դիակները գտնուած են Ժա- լալապատի մէջ: Հիւսիսի Դաշինքի ադրիւրները հա- ղորդեցին, որ թղթակիցներուն դէմ յարձակում գոր- ծող պիւնեալներուն ինքնութիւնը տակաւին ծանօթ չէ:

Միւս կողմէ, Գերմանիա կը պատրաստուի հիւրընկա- լելու Աֆղանիստանի քաղաքական ապագային մասին բանակցութիւնները, որոնք հաւանաբար Պերլինի մէջ պիտի սկսին Շաբաթ օր: Կը նախատեսուի, որ ՄԱԿ բանակցութիւններուն մասին մանրամասնութիւններ հրապարակէ:

ՊՈՒՅ ԻՅԹԱՒԻ ԿԸ ԵՐԱԽԻՐԷ ԻՍԼԱՄ ՂԵՍՊԱՆՆԵՐ

Իսլամական աշխարհին մէջ ամերիկեան դիմագի- ծը բարելաւելու նպատակով, նախագահ Պուշ Երկու- շաբթի երեկոյեան իֆթարի սեղան մը սարքեց ի պատիւ իսլամական երկիրներու դեսպաններուն:

Հանդիպումին ընթացքին, Պուշ դեսպաններուն ըսաւ, որ Աֆղանիստանի ռմբակոծումը պէտք է շարու- նակուի, որովհետեւ «չարիքը սուրբ օրեր չունի»:

Պուշ ամերիկացի առաջին նախագահն է, որ իֆթա- րի հրաւիրած է իսլամ դեսպանները: Անոր աննախըն- թաց արարքին նպատակն է համոզել դեսպանները, որ Աֆղանիստանի մէջ տեղի ունեցող պատերազմը իս- լամութեան դէմ չէ: Ընթրիքին ներկայ էին արտաքին գործոց նախարար Քոլին Փաութը եւ բարձրաստիճան ալլապաշտօնատարներ:

Ընթրիքէն առաջ, դեսպանները հաւաքական աղօթք մը կատարեցին: Պուշ ներկայ չէր աղօթքին:

(ՌՈՅԹԸՐԶ)

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5013

Պատրաստեց՝ Տ.Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ՇՈՐԻՁՈՆԱԿԱՆ	ՈՒՂԱՇԱՅԵԱՑ
1. Առաքինի, ուղղա- միտ - Յուդայական ածա- կան:	1. Հոգեգալուստ:
2. Սահմանում - Թէո- դիկի ստորագրութիւն- ներէն - Զկնաքաղ:	2. Իգական անուն - Սուրիական լրատու գոր- ծակալութիւն:
3. Կրկնուած բաղա- ձայններ - Կարիք - Այ- բուբենէն:	3. Կրկնուած բաղա- ձայններ - Տերեփուկ - Աղբուր:
4. Իգական օտար անուն - Թիւուանատ:	4. Շփացած, երես առած:
5. Նմանապէս այլ բա- ներ:	5. Թէ որ - Լմպանք, զրատի վզկապ:
6. Խոտոտել կամ հրա- պուրել:	6. Վաղուց - Եւրոպա- ցի իշխանուհի:
7. Մայրաքաղաք - Կլայել:	7. Կրկնուած բաղա- ձայններ - Արական անուն:
8. Յուդայական ածա- կան - Պատկերահան:	8. Արօսի, հազորենի:
9. Տան վերաբերեալ - Ստացական ածական:	9. Մուրացանի վիպակ- ներէն՝ «... Ագուալը» - ԼՂՀի քաղաքներէն:
10. Անձ - Բեւեկնագգի ու ռետային ծառ:	10. Լիբանանի ծովե- ղերեայ շրջաններէն - Մէկ:

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ը	Ն	Ա	Ե	Յ	Թ	Կ	Հ	Ա	Տ
2	Ն	Ի	Ա	Կ	Ա	Ր	Ա	Ա	Ր	Ի
3	Զ	Ա	Ր	Ք	Ա	Ր	Ո	Ր	Ա	Կ
4	Ա	Զ	Ա	Տ	Ա	Ն	Ի	Ա	Զ	Ա
5	Գ	Ա	Ր	Տ	Ի	Ա	Ս	Ա	Ի	Ի
6	Ե	Լ	Ի	Ե	Ա	Ո	Տ	Ա	Ա	Կ
7	Ղ	Ղ	Ա	Ր	Ա	Ն	Ի	Ի	Ր	Ի
8	Ի	Ա	Ա	Կ	Ա	Ն	Կ	Տ	Ի	Ի
9	Է	Մ	Ք	Գ	Լ	Ի	Ի	Կ	Ո	Ր
10	Ա	Ա	Ե	Ր	Զ	Ա	Ա	Ա	Ա	Ա
11	Կ	Ա	Ս	Ր	Զ	Ա	Ա	Ա	Ա	Ա

ԹԻԻ 5012

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԽՈՒՍԸ

ՉԱՐԵՅԷ 15,000 ՏՈԼԱՐԻ ԱՐԺԷՔԱԻՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ

Win up to \$15,000 in prizes

Peugeot 206
Trip to Cyprus for 2 persons (6 nights)
2 FUJITSU air condition
2 General Electric washing machine
Sony HI FI DX5
Philips DVD 711 with zoom
Panasonic TV 21 inch
Sony TV 21 inch
Continental oven



Peugeot 206 ինքնաշարժ մը
2 անձի Կիպրոս ճամբորդութիւն (6 գիշեր)
2FUJITSU էր քոնտիսիոնէ
2 General Electric լուացքի մեքենայ
Sony հնայ ֆայ Dx5
Philips DVD 711 գուսով
Panasonic հեռատեսիլ 21 ինչ
Sony հեռատեսիլ 21 ինչ
Զոնթինենթալ փուռ

